ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ, գործընկե՛ր, հայ ժողովրդի պատմության մեջ, մեր երկրի համար օրհասական պահերին բոլոր հաղթանակների թիկունքում կանգնած են եղել այն անհատներն ու խմբերը, ովքեր սեփական կամքով իրենց ուսերին են վերցրել հայրենիքի բեռը թեթևացնելու սրբազան գործը:

Ռազմի դաշտում հայ կամավորները եղել են առաջամարտիկը, երկրաշարժի օրերին սեփական ձեռքերով փրկել են հազարավոր կյանքեր: Բռնի տեղահանված ընտանիքների համար վերջիններս դարձել են փրկօղակ՝ զոր ու գիշեր իրենց ողջ ուժն ու կարողությունը ներդնելով նրանց համար ապահով ու անվտանգ միջավայր ստեղծելու գործում:

Կամավորների միջազգային օրը հնարավորություն է շնորհակալություն հայտնելու նրանց, ովքեր տալիս են իրենց ողջ կարողությունը՝ առանց որևէ ակնկալիքի՝ հանուն անհատի և հասարակության բարեկեցության ու ապահովության:

Սիրելի՛ Կամավորներ, շնորհակալություն եմ հայտնում յուրաքանչյուրիդ՝ ձեր համայնքի և հայրենիքի զարգացման գործում ներդրած ջանքերի ու նվիրման համար:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Փամբակ համայնքում գործող կամավորական խմբերին, բոլոր այն անհատներին, ովքեր ապրում եմ մեր երկրի սահմաններից դուրս, սակայն շարունակում են նպաստել իրենց հայրենակիցների բարօրությանը:

Ցանկանում եմ ձեզ ուժ, եռանդ և բարին նվիրվելու անսահման կարողություն:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան